Տնտեսական աճի և կարծրացած վախերի մասին կամ մեռնող բիզնես փրկելը գին ունի

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

ՀՀ 2023-2025 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը Հայաստանի տնտեսության աճի մոդելը պայմանավորում է միջազգային մրցունակության աճով՝ որդեգրելով գիտելիքահենք և նորարարական տնտեսություն ձևավորելու տեսլականը և գիտելիքն ու նորարարությունը հռչակելով տնտեսական զարգացման հիմնական շարժիչ ուժ: Աճի մոդելի՝ ընտրված այս ուղղությունն այնքան գրավիչ է, որ առաջին հայացքից պետք է խնդիրների մասին չխոսենք, այլ պարզապես ավելացնենք մեր ջանքերը և դրանք ուղղենք բարձր տեխնոլոգիաների զարգացմանն ու դառնանք մրցունակ, արագ աճող երկիր: Այնուամենայնիվ, հեռանկարային կայուն տնտեսական աճ ունենալու համար, անկախ ամեն ինչից, մեր հետևյալ մոտեցումները պարտավոր ենք վերանայել.

- եղածներին պահպանելուց դեպի նոր ընկերությունների ձևավորում,
- շահույթից դեպի ներդրումներ,
- շահույթից դեպի նորարարություն,
- արտադրությունից դեպի ռիսկերի կառավարում,
- արտադրողից դեպի սպառող,
- գնայինից դեպի որակ,
- սուբսիդավորումից դեպի մրցակցություն:

1. Տնտեսությունը. «օգնենք, որ չմեռնի»-ի՝ ներքև քաշող սովորույթը

Բարձր տեխնոլոգիաների ոլորտը Հայաստանի տնտեսության թեկուզ արագ զարգացող, բայց դեռևս փոքր մասնաբաժին ունեցող հատվածն է: Տնտեսական աճի մոդելները հնարավոր չէ կառուցել դրա միայն փոքր մասի արտադրողականությունը բարձրացնելու հաշվին: Տնտեսության աճն ապահովող գործոնները շատ են, ինչպես երևում է գծապատկերից վերջին տասներկու տարում էականորեն փոփոխվել է տնտեսության կառուցվածքը՝ շինարարությունը և գյուղատնտեսությունն իրենց տեղը զիջել են հանքարդյունաբերությանը և պետական միջոցներով աճ ապահովող ճյուղերին՝ մասնավորապես առողջապահությանը և պետական կառավարմանը:



Ո՞վ է որոշում, թե տնտեսության որ ճյուղն է որից կարևոր: Պետական քաղաքականությու՞նը, շու՞կան, ներքին պահանջա՞րկը, արտահանու՞մը, տեխնոլոգիա՞ն: Ինչպիսի պատասխան էլ տանք, պետք է արձանագրենք մի պատմական իրողություն. Հայաստանում մենք միշտ վախեցել ենք

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

կորուստից, ցանկացած բիզնես, ճյուղ կամ ուղղություն, ընդհուպ մինչև ձեռնարկություն և նույնիսկ միկրո-բիզնես, մենք վախենում ենք այն կորցնել և գնում ենք պահպանողական՝ տնտեսության ցանկացած ձեռքբերում ամեն գնով պահելու մոդելով: **Պահպանել եղածը, թե՞ չվախենալ նոր ընկերությունների ձևավորումից:**

2. Կապիտալի ու աշխատուժի արտադրողականությունը. հանքարդյունաբերության հաղթարշավը

Զարգացող երկրների տնտեսություններն ավելի արագ են աճում, քան զարգացած երկրներինը՝ երևույթ, որը շատ ուսումնասիրված է և բացատրվում է այն պարզ հանգամանքով, որ զարգացող երկրները չեն մոտեցել սահմանային նվազող արտադրողականության վերին սահմանին, և դեռևս դրա ստորին՝ արտադրողականության համեմատաբար մեծ աճ ապահովող հատվածում են:



Հայաստանը նույնպես բացառություն չէ, սակայն կարևոր է գիտակցել, որ պարզապես այս պոստուլատով շարժվելը երկարաժամկետ հատվածում չի կարող ապահովել նույն բարձր տեմպերով աճը. ինչ-որ պահի մեզ մոտ էլ արտադրողականությունը կմոտենա սահմանային նվազող եզրին: Աշխատուժի ընդհանուր արտադրողականությամբ՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մակարդակով Հայաստանը զիջում է շատ երկրների և զարգացած երկրների արտադրողականության մասին խոսելը զավեշտ է: Պետք է գիտակցել, որ տնտեսության ավանդական ճյուղերը՝ արդյունաբերությունը, առևտուրը, շինարարությունը և գյուղատնտեսությունն են ապահովում հիմնական



զբաղվածությունը երկրում, ուստի այս ոլորտների արտադրողականությունն էլ դառնում է որոշիչ երկրի ընդհանուր ցուցանիշի համար:

Դիտարկենք արդյունաբերության ոլորտը: Գծապատկերից երևում է, որ աշխատանքի արտադրողականության միտումն աճողական է: Պարզ լեզվով ասած, բոլոր ոլորտներում հանրագումարային գրանցվել է զբաղվածության աճ՝ միևնույն ժամանակ ապահովելով արտադրության իրական ավելի մեծ աճ: Մինչդեռ նույն գծապատկերից երևում է նաև, որ վերջին տարիներին միայն հանքարդյունաբերության ոլորտն է գրանցել արտադրողականության աճ: Կապիտալի արտադրողականության փոփոխությունն արդեն այլ պատկեր է ցույց տալիս[1]:

10-ամյա կտրվածքով միայն երկու ճյուղ են ապահովել կապիտալի արտադրողականության աճ, որից էականը հանքարդյունաբերությունն է: Պատճառը կարող է լինել ինտենսիվ աճը[2], տեխնոլոգիական աճը և այլն: Էներգետիկ համակարգն ապահովել է կապիտալի արտադրողականության ամենամեծ անկումը, այսինքն կատարվել են էական կապիտալ ներդրումներ, սակայն արտադրության աճը համամասնորեն չի եղել: Էներգետիկայի ոլորտը կապիտալատար է, և այս ցուցանիշից երևում է, որ ներդրվող էներգետիկ հզորություններն ու իրական արտադրությունը իրար չեն համապատասխանում: Համադրելով իրական աշխատավարձի աճի հետ, ակնհայտ է դառնում, որ նման աճը հիմնականում եղել է շահույթին ուղղված, և ահա այստեղ է աքիլեյան գարշապարը: Բիզնես ծրագրերը, որոնք կազմվում են շահույթ ստանալու նպատակով էականորեն տարբերվում են նորարարության և ներդրումներին ուղղված մոտեցումից: **Բիզնես անել, որպեսզի հանկարծ վնասներ չկրես, թե՞ ներդրումներ և նորարարության մասին հոգալ, որպեսզի երկարաժամկետ օգուտներ ստանաս:** Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ միայն երկրորդ մոտեցումն է ապահովում երկրների մրցունակությունը՝ ռիսկ վերցնելն է միայն ապահովում երկարաժամկետ բարձր արտադրողականություն: «Շահութաբերության նորմա» հնաբանությունը դեռևս դրված է բիզնես ծրագրերի հիմքում, չկան ներդրումային և նորարարական ծրագրային մոտեցումներ:

3. Տնտեսական աճի աղբյուրը. անարդյունավետ ներդրումների կառավարչական պատասխանատվությունը

Հայաստանում տնտեսական աճի հիմնական աղբյուրը շարունակում է մնալ կապիտալի խորացումը: Աշխատանքի արտադրողականության աճը նույնպես բացատրվում է կապիտալի խորության մեծացմամբ՝ կապիտալ ներդրումներն ապահովում են տնտեսության աճ, այսինքն արտադրությունը մեծանում է, նույնիսկ եթե զբաղվածությունը մնա նույն մակարդակի վրա:



Էներգետիկ ոլորտում տեղի է ունեցել կապիտալ խորության ամենամեծ աճը: Արդյունաբերական մյուս ճյուղերը նույնպես աճ են ապահովել: Սա տնտեսության կառավարման տեսակետից ամենանվազ ցավոտ տնտեսական աճի մոդելն է՝ չի պահանջում կառուցվածքային փոփոխություններ, միայն ներդրումները ապահովում են տնտեսական աճ և դրա հաշվին մեծացնում աշխատանքի արտադրողականությունը: Սակայն արդյո՞ք սա դարձնում է Հայաստանի

[1] Բոլոր հաշվարկները կատարվել են ՄԶՄԿ կողմից Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա:

[2] Ցավոք աշխատանքի արտադրողականությունն ըստ աշխատաժամանակի չենք կարող չափել, այն ըստ զբաղվածների քանակի է:

տնտեսությունը մրցունակ, արդյո՞ք կապիտալ միջոցները, որոնց աղբյուրի հիմնական մասը վարկերն են, ռացիոնալ են բաշխվում, արդյո՞ք այս մոդելը կապահովի երկարաժամկետ տնտեսական աճ: Իհարկե, գույքը մաշվում է, և յուրաքանչյուր նոր ներդրում ենթադրում է առավել բարձր տեխնոլոգիական որակի ապահովում, սակայն հինը պահպանելու համար կատարվող վերաներդրումները չեն ապահովում տեխնոլոգիական հեղափոխական թռիչք, նորարարություն, և ամենակարևորը, չեն պատասխանում այն հարցին, թե ո՞վ է որոշողը: Ո՞վ պետք է կրի կայացված որոշումների և վերցված ռիսկերի համար կառավարման պատասխանատվությունը. ստացվում է, որ այսօր վճարում ենք էներգետիկ ոլորտի պարապուրդի համար: Պետական բյուջեում շատ են նաև տարբեր ոլորտներին ցուցաբերվող աջակցությունը, վարկերը, վարկային երաշխիքները, հարկային և այլ արտոնությունները: **Պետությունը պետք է ոչ թե մտածի բիզնեսի սուբսիդավորման, այլ մրցակցության մասին:**

4. «Վերադարձրեք մեզ հին պայմանները, որ շարունակենք գործել» հետադիմական մեյնսթրիմը

Փորձեցինք պարզ ձևով ներկայացնել տնտեսական աճի նոր դասական մոտեցումը, թե արտադրողականության ինչ փոփոխություններ են եղել: Ցավոք, երբ դիտարկում ենք տնտեսական աճի պետական քաղաքականության փաստաթղթերը կամ էլ տնտեսության աճի վերաբերյալ բազմաթիվ քննարկումների արդյունքները, այնտեղ հանդիպում ենք այսպես ասած տնտեսության զարգացման արտադրական մոտեցմանը՝ համարյա մոտենալով տնտեսության պլանային կառավարման մոդելին: Եղածը կորցնելու վախը, նոր ներդրում կատարելու ռիսկի վերաբաշխումը թույլ չի տալիս տնտեսության աճին նայել ժամանակակից ակնոցներով: Տնտեսությունը շատ մրցակցային է, և որքան էլ տարօրինակ հնչի, առաջընթացի հիմքը հենց այդ մրցակցության հետևանքով հաջողակների առաջ գնալն է, իսկ անհաջողակների՝ սնանկացումը: Պետք չէ վախենալ սնանկացումներից, պետք չէ վախենալ նրանից, որ մարդիկ աշխատատեղ կկորցնեն: Համակարգային[3] մոտեցումը ենթադրում է, որ եթե տնտեսության անհաջողակ հատվածը փորձում ենք պահպանել, ապա իրական տուժողները լինում են պոտենցիալ հաջողակները: Օրինակ, համաշխարհային ճգնաժամի հետևանքով կտրուկ աճել են «ամպային սերվերների» պահպանման ծախսերը, այսինքն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ծախսերի աճ է գրանցվել, և այս պահին SS ոլորտի կազմակերպությունները լրջորեն մտածում են, թե ինչպես ճշգրտեն իրենց բիզնեսի ծախսերի կառուցվածքը՝ դիմակայելու այս նոր մարտահրավերին: **Բիզնեսին զուտ որպես արտադրություն դիտարկելը հանգեցրել է միայն գնային գործոնները կարևորելուն՝ մոռանալով նոր որակի և առավել բարդ ապրանքների/ծառայությունների շուկա մտնելու առաջնահերթությունը:** Կշահեն նրանք, որոնք նորարարությամբ կհարմարվեն այս իրողությանը, կշարունակեն առաջ գնալ և ոչ թե կփորձեն հինն ամեն գնով պահպանելու ուղին ընտրել: Հայաստանում նույնպես մարտահրավեր է՝ դրամի արժևորումը, և մենք ականատես ենք լինում SS ոլորտի ներկայացուցիչների պարզ ուղերձին՝ վերադարձրեք «նախկին փոխարժեքը», որպեսզի պահպանենք այն շուկան և պայմանագրերը, որոնք ունենք:

Բիզնեսի կառավարումը շատ ավելի բարդ է, քան արտադրելը, քան ծրագրավորելը, այն նաև ենթադրում է բանակցություններ, շուկայական բարդ հարաբերություններ, ֆինանսների կառավարում, կորպորատիվ կառավարում, ի վերջո բիզնեսի առքուվաճառք, բիզնեսի միավորումներ, բիզնեսի կառավարման արտապատվիրակում և այլն: Տնտեսության հանդեպ մեր մտածողությունն էական փոփոխության կարիք ունի: Իհարկե, շուկայի կապիտալացումը կլուծի այս հարցը, բայց միգուցե հակառակն է խնդիրը. Միգուցե նման մտածողության գոյությունն է, որ մինչև հիմա չի հանգեցրել շուկայի կապիտալացման: Մինչև հիմա Հայաստանում կան խոշոր ձեռնարկություններ, որոնք ոչ թե կապիտալացված են, այլ վարկային միջոցների հաշվին են վարում ողջ գործունեությունը, և ոչ հազվադեպ հենց սեփականատերերի կողմից տրամադրված վարկային միջոցների: Եթե սեփականատերը չի հավատում իր բիզնեսի կառավարմանը, ապա նման բիզնեսը դատապարտված է: **Ժամանակակից բիզնեսը արտադրական գործընթաց չի, այլ ռիսկերի կառավարում է:**

5. Ինստիտուտներ. գլխի վրայից իջեցնել արտադրողին և դնել սպառողին

Ինչպես նշեցինք, տնտեսական աճին զուտ որպես արտադրողի տեսանկյունից դիտարկելը սահմանափակում է զարգացող երկրների աճի պոտենցիալը: Տնտեսությունում շատ են մասնակիցները, արտադրող և սպառողներին զուգահեռ կան կարգավորիչները, աշխատանքային հարաբերությունները, ստանդարտները, աշխատողները, սեփականատերերը, կառավարիչները, ներդրողները և այլն: Այս բոլոր մասնակիցների մրցակցային և համագործակցային վարքագիծն էլ

[3] Տնտեսական աճի դինամիկ մոդելների

որոշում է արտադրողականության աճը: Աճեմողլուն, խաղերի տեսության մոդելներից[4] մեկում եզրահանգում է, որ ինստտուտների և սահմանադրության բարեփոխումները հաճախ հանգեցնում են ոչ թե անհրաժեշտ փոփոխությունների, այլ կայունության, այսինքն, մասնակիցները, երբ ինստիտուցիոնալ կառուցվածքը կայուն է, թեպետ ցանկանում են փոփոխություններ, սակայն բարեփոխման սկզբում վախենալով կորցնել որոշակի բարեկեցություն, վերարտադրում են նախնական կայունությունը: Զարգացող երկրների արտադրողականության աճը քննարկելով՝ նմանատիպ եզրահանգման է գալիս Վիլիամ Լյուիսը[5]՝ առաջարկելով հետաքրքիր մոտեցում. **դիտարկե՛ք տնտեսությունը միայն սպառողի տեսակետից, մի կողմ դրե՛ք արտադրողի տեսակետից տնտեսությունը կառավարելը:** Առաջին հայացքից սա կարող է թվալ չափից շատ դասական, այսինքն այն, որ շուկայի անտեսանելի ձեռքը կորոշի արդյունքը, սակայն խոսքը մտածողական այլ մակարդակի մասին է: Զարգացող երկրներում, ցանկացած ոչ մրցունակ և ոչ արտադրողական ձեռնարկության հետևում որոշակի փոքր սոցիալական խումբ է կանգնած, և մտավախությունը, որ այն կարող է աջակցություն չստանալ մտահոգում է քաղաքական իշխանությանը սոցիալական հետևանքների առումով: Սակայն մյուս կողմից, որպեսզի այդ ձեռնարկությունը դառնա մրցունակ և հաջողակ, պետք է կարողանա դիմագրավել մարտահրավերներին՝ չենք գիտակցում, որ փափուկ բարձ դնելու քաղաքականությունը երկարաժամկետ հատվածում սահմանափակում է տնտեսական աճի պոտենցիալը: Բիզնեսին ուղիղ աջակցության՝ արտադրողի հոգեբանության փոխարեն պետք է պարզ բանաձև ընդունենք՝ աջակցել, նշանակում է բիզնեսի առջև վերացնել խոչընդոտները: Սեփականության իրավունքի պաշտպանությունը, ոլորտային ենթակառուցվածքները և էկոհամակարգերը, շուկայական ինստիտուտները, ազնիվ մրցակցությունը և գնագոյացումը՝ ահա այն ամենը, ինչը պետք է առաջնային կերպով մտահոգի պետական քաղաքականությանը: Բարձր տեխնոլոգիաների ոլորտի քաղաքականության փաստաթղթերում այս ամենը կա, սակայն շուկան, տնտեսությունը միայն մի ոլորտ չի: Պետական կառավարման համակարգն ինքնին արտադրողականության լուրջ խնդիր ունի. մի պահ պետք է մոռանալ արտադրողի տեսակետից դիտարկելը, և հարց տալ, արդյո՞ք սպառողը (տվյալ դեպքում հանրային ծառայությունների) գոհ է: Իհարկե իրավական դաշտը և ինստիտուտները պազապես ներմուծելով ինքնաբերաբար չենք ստանա ցանկալի արդյունք. տեղական մարտահրավերները նույնպես պետք է հաշվի առնել և լուծումներ գտնել:

Համառոտագիրը մշակվել է «Աջակցություն դրամավարկային ու ֆինանսական հատվածի հաղորդակցության ռազմավարությանը» ծրագրի շրջանակներում

[4] Political Economy Lecture Notes, Daron Acemoglu,

[5] The power of productivity, William W. Lewis, The McKinsey Quarterly, 2004 Number 2